



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. սեպտեմբերին /վերլուծություն/

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9429 գործարքներ, որոնց քանակը 2005թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 9.5%-ով, իսկ 2006թ. օգոստոսի համեմատ՝ 12.6%-ով:

2006թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4076 օտարման գործարքների 88.7% կազմել են առուվաճառքները, 10.6%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.2%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.2% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. սեպտեմբերին, 2006թ. օգոստոսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 14.0%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 6.5%-ով: 2006թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.8% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2006թ. օգոստոսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 25.2%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 2.4%-ով:

2006թ. սեպտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. սեպտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2005թ.	սեպտեմբեր 2006թ.	օգոստոս 2006թ.
Կենտրոն	178900-900000	303800	396600	385000
Արաբկիր	114300-771000	250000	312700	305700
Քանաքեռ Զեյթուն	111100-362900	151600	195000	185700
Նոր-Նորք	92300-327800	148700	179600	174300
Ավան	99100-226300	130100	169400	161300
Էրեբունի	103800-293400	130400	162100	154400
Շենգավիթ	105100-399400	156200	191100	188400
Դավթաշեն	118000-282100	157700	203200	193300
Աջափնյակ	103800-451100	148400	180700	172100
Մալաթիա-Սեբաստիա	90300-271900	144100	173900	172700
Նուբարաշեն	57400-137500	78600	112600	110000
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	57400-900000	163600	207000	200300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. սեպտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2006թ օգոստոսի համեմատ աճել են 3.3 %:

2006թ. սեպտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 485 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. օգոստոսի համեմատ նվազել է 20.5%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 1.7%-ով:

2006թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. սեպտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
			սեպտեմբեր 2005թ.	սեպտեմբեր 2006թ.	օգոստոս 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	60300 - 95000	49000	72600	69200
	Ապարան	18000 - 28000	21900	26500	25900
	Թալին	13600 - 34800	21600	26600	26600
Արարատ	Արտաշատ	39100 - 137780	37500	58000	55200
	Մասիս	36000 - 96100	49800	66800	63600
	Վեդի	22600 - 65300	32300	47000	43500
	Արարատ	19300 - 75100	36200	45100	43000
Արմավիր	Վաղարշապատ	71000 - 159100	72600	93900	93900
	Արմավիր	38700 - 125200	43600	63700	63500
	Մեծամոր	33000 - 67600	24100	44000	39700
Գեղարքունիք	Սևան	28300 - 88200	29400	44300	39000
	Գավառ	20400 - 30000	21400	29100	24900
	Մարտունի	22500 - 67500	35500	38800	38800
	Վարդենիս	13500 - 30000	18500	21000	21000
	Ճամբարակ	5900 - 31100	10300	13200	13200
Լոռի	Վանաձոր	27000 - 115200	38900	56100	56100
	Ստեփանավան	15000 - 31700	21700	26000	24800
	Սյիտակ	30300 - 57300	25600	40300	39300
	Այվերդի	9600 - 25000	17800	21100	21100
	Տաշիր	11300 - 33300	19600	20800	19800
	Թումանյան	4100 - 11300	5300	5400	5400
	Շամլուղ	2300 - 8300	2800	3000	3000
	Ախթալա	6800 - 16000	10400	10900	10900
Կոտայք	Աբովյան	55000 - 184700	75500	109200	105000
	Նոր Հաճն	53100 - 101000	55100	74300	70740
	Բյուրեղավան	22700 - 79800	34400	53000	50500
	Եղվարդ	50200 - 88200	45600	69700	66400
	Հրազդան	20900 - 73400	27700	41400	39600
	Ծաղկաձոր	68000 - 88800	54400	76800	73100
	Չարենցավան	26300 - 78400	34400	46700	46700
Շիրակ	Գյումրի	25100 - 127100	40900	52800	52800
	Արթիկ	19600 - 61500	25000	34800	31730
	Մարալիկ	8400 - 30000	21600	21600	21300
Սյունիք	Գորիս	26800 - 79300	43500	52500	52500
	Կապան	29000 - 91400	31100	52400	45600
	Սիսիան	26700 - 62700	26400	44700	38900
	Մեղրի	20000 - 43300	21200	33600	30900
	Ագարակ	9000 - 31100	17400	20900	19900
	Քաջարան	20200 - 45600	16700	28300	28300
	Դաստակերտ	4500 - 11300	6400	6800	6800
Վայոց Ձոր	Վայք	39500 - 52200	28600	42400	40400
	Եղեգնաձոր	33800 - 117000	40800	63400	63400
	Ջերմուկ	43600 - 189200	44300	72500	69080
Տավուշ	Դիլիջան	28100 - 95800	31900	52300	49800
	Իջևան	40600 - 99900	36800	62900	59870
	Բերդ	22100 - 70600	25400	30500	30470
	Նոյեմբերյան	8500 - 25000	14300	23100	22000
	Այրում	12000 - 22000	10000	18000	18000

2006թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. օգոստոսի համեմատ աճել են 4.2%:

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 457 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 126, մյուս մարզերում միասին վերցրած՝ 331: 2006թ. օգոստոսի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 1.7%-ով, ընդ որում Երևանում աճել է 16.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 7.3%-ով: 2005թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.8%-ով, ընդ որում Երևանում է 5.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 6.0%-ով:

2006թ. սեպտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. սեպտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
		սեպտեմբեր 2005թ.	սեպտեմբեր 2006թ.	օգոստոս 2006թ.
Կենտրոն	135000-900200	331500	397900	389700
Արաբկիր	90000-450100	265700	314200	307800
Քանաքեռ-Զեյթուն	67500-270100	158100	196100	187800
Նորք-Մարաշ	90000-450100	182100	189900	188300
Ավան	90000-360100	136800	170600	162800
Էրեբունի	67500-225100	136400	163200	155800
Շենգավիթ	67500-202500	160900	192300	190000
Դավթաշեն	90000-405100	163600	204600	194800
Աջափնյակ	67500-270100	156600	182200	174200
Մալաթիա-Սեբաստիա	67500-405100	147200	175700	174500
Նուբարաշեն	40500-155000	87000	114200	113100
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	40500-900200	175100	209200	203500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. սեպտեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. օգոստոսի համեմատ աճել են 2.8 % :

2006թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. սեպտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/		
			2005թ. սեպտեմբեր	2006թ. սեպտեմբեր	2006թ. օգոստոս

Արագածոտն	Աշտարակ	29100 - 98000	50300	74100	70300
	Ապարան	13500 - 36000	23800	27900	27800
	Թալին	13600 - 36000	22900	27600	27400
Արարատ	Արտաշատ	22500 - 141000	38300	59300	55900
	Մասիս	25000 - 98000	51300	68100	64900
	Վեդի	22500 - 67500	33600	48000	44700
	Արարատ	22500 - 76800	37200	46400	43600
Արմավիր	Վաղարշապատ	54100 - 164200	74300	95900	94700
	Արմավիր	22500 - 126000	45300	65300	64000
Գեղարքունիք	Սևան	18000 - 90600	32100	45400	39800
	Գավառ	10000 - 37800	22800	30200	26200
	Մարտունի	22200 - 68000	37400	40200	40100
	Վարդենիս	11000 - 32500	21100	22500	22500
	Ճամբարակ	4500 - 32600	11000	14800	14700
Լոռի	Վանաձոր	23200 - 116800	40300	58000	56600
	Ստեփանավան	13500 - 40200	27000	27700	27400
	Սյիտակ	20000 - 58600	26700	41300	39900
	Ալավերդի	9000 - 31500	18400	22200	22000
	Տաշիր	9000 - 36500	20800	21900	21200
	Թումանյան	4500 - 18000	6700	7000	6900
	Շամլուղ	2300 - 13500	4100	4300	4300
	Ախթալա	9000 - 22500	12000	12400	12200
Կոտայք	Աբովյան	45500 - 191600	78700	111200	106000
	Նոր Հաճն	42500 - 105800	56700	75300	71500
	Բյուրեղավան	22200 - 81400	35900	54100	51500
	Եղվարդ	30200 - 90300	49900	71000	67200
	Հրազդան	18000 - 74000	30100	42500	40200
	Ծաղկաձոր	40000 - 112500	56100	78000	75800
	Չարենցավան	18000 - 79300	38300	47900	47800
Շիրակ	Գյումրի	28200 - 129000	43500	54000	53800
	Արթիկ	13300 - 62400	27800	35800	32600
	Մարալիկ	13500 - 40000	23700	24100	24000
Սյունիք	Գորիս	18000 - 79900	44400	54100	54000
	Կապան	22000 - 94000	33900	53400	47000
	Միսիան	20000 - 66400	28200	45700	39900
	Մեղրի	13500 - 44800	23600	34600	31600
	Ագարակ	13300 - 36000	19700	22000	21000
	Դաստակերտ	4500 - 18000	8700	8800	8800
Վայոց Ձոր	Վայք	26000 - 55600	30200	43400	41200
	Եղեգնաձոր	22200 - 118400	44800	64600	64200
	Ջերմուկ	26500 - 191600	30200	38700	37600
Տավուշ	Դիլիջան	26600 - 97500	33200	53500	50800
	Իջևան	22200 - 101100	38200	64100	61000
	Բերդ	20000 - 71200	26400	31400	31300
	Նոյեմբերյան	9000 - 31500	15100	23900	23000
	Այրում	5200 - 28000	11200	19200	19200

2006թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. օգոստոսի համեմետ աճել են 4.3 %:

Ընդհանուր առմամբ, 2006թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարվել են 1595 միավոր /1194.13 հա/ հողեր, որից Երևանում՝ 148 միավոր /16.69 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 45 միավոր /2.85 հա/ հողեր, որից Երևանում՝ 27 միավոր /1.43 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 751 միավոր /1101.04 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.47 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 601 միավոր /57.94 հա/, որից Երևանում՝ 85 միավոր /5.12 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 223 միավոր /25.61 հա/, որից Երևանում՝ 58 միավոր /11.07 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 6 միավոր /1.70 հա/, որից Երևանում՝ 1 միավոր, /0.03 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր 7 միավոր /6.74 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր 7 միավոր /1.10 հա/ ընդհանուր մակերեսով: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1518 միավորի /1159.13 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 143 միավոր /16.41 հա/, նվիրատվության գործարքներ՝ 64 միավորի /31.57 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.26 հա/ և փոխանակության գործարքներ՝ 13 միավորի /3.43 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.02 հա/:

Հանրապետությունում 2006թ. սեպտեմբերին, 2005թ. սեպտեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 48.0%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 51.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 44.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 25.0%-ով, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ աճել՝ 2.3 անգամ, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 7 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 567.63 հա, որից 561.51 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 35.8% կամ 544 գործարքներ /667.81 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 58 գործարքներ /7.15 հա/, իսկ 64.1%-ը կամ 973 միավորը /469.23 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 85 միավոր /9.26 հա/: 2006թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք /Արարատի մարզ՝ 22.09 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքը.

ՄԱՐԳԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Չեսական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/
Երևան	0	0.00	1	0.03	17	1.09	40	6.04	4	0.47	0	0.00	64	3.77	17	5.01
Արագածոտն	10	9.20	1	0.30	0	0.00	24	2.51	63	48.96	0	0.00	44	4.48	3	0.32
Արարատ	27	33.95	0	0.00	42	3.98	18	1.10	74	39.55	1	0.01	62	6.30	1	0.13
Արմավիր	57	388.38	0	0.00	0	0.00	4	0.04	76	173.13	0	0.00	59	5.17	14	0.92
Գեղարքունիք	3	5.60	1	0.06	1	0.24	11	0.54	9	9.14	0	0.00	7	0.96	2	0.50
Լոռի	0	0.00	0	0.00	2	0.005	8	0.27	121	71.31	0	0.00	9	0.92	2	0.004
Կոտայք	95	171.95	1	0.14	63	5.86	21	2.26	107	42.19	0	0.00	158	19.37	7	2.64
Շիրակ	1	1.00	1	1.17	24	1.33	21	1.06	12	10.10	0	0.00	5	0.22	2	0.06
Սյունիք	0	0.00	0	0.00	1	0.10	4	0.23	11	12.96	0	0.00	4	0.28	2	0.18
Վայոց Ձոր	11	21.21	0	0.00	3	0.12	16	1.36	2	0.54	0	0.00	4	1.22	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	6	0.44	2	0.25	17	6.32	0	0.00	3	0.25	0	0.00
Ընդամենը	204	631.29	5	1.70	159	13.17	169	15.66	496	414.67	1	0.01	419	42.94	50	9.76

Ստորև ներկայացվում է 2006թ. սեպտեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների և էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԳԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/	Միավոր	Մակերես /հա/		
Երևան	34	3.66	1	0.03	8	0.44	25	3.19	24	3.49	0	0.00	0	0.00	9	0.65	15	2.84
Արագածոտն	6	0.05	0	0.00	0	0.00	6	0.05	29	11.96	10	9.20	1	0.30	0	0.00	18	2.46
Արարատ	7	0.17	0	0.00	2	0.04	5	0.13	80	38.87	27	33.95	0	0.00	40	3.95	13	0.97
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	61	388.42	57	388.38	0	0.00	0	0.00	4	0.04
Գեղարքունիք	2	0.07	1	0.06	0	0.00	1	0.01	14	6.37	3	5.60	0	0.00	1	0.24	10	0.53
Լոռի	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	9	0.272	0	0.00	0	0.00	1	0.002	8	0.27
Կոտայք	7	0.47	1	0.14	0	0.00	6	0.33	173	179.74	95	171.95	0	0.00	63	5.86	15	1.93
Շիրակ	3	0.09	0	0.00	1	0.07	2	0.02	44	4.47	1	1.00	1	1.17	23	1.26	19	1.04
Սյունիք	1	0.13	0	0.00	0	0.00	1	0.13	4	0.20	0	0.00	0	0.00	1	0.10	3	0.10
Վայոց Ձոր	7	0.85	0	0.00	0	0.00	7	0.85	23	21.84	11	21.21	0	0.00	3	0.12	9	0.51
Տավուշ	6	0.48	0	0.00	4	0.23	2	0.25	2	0.21	0	0.00	0	0.00	2	0.21	0	0.00
Ընդամենը	74	5.97	3	0.23	16	0.78	55	4.96	463	655.84	204	631.29	2	1.47	143	12.39	114	10.69

Հանրապետությունում 2006թ. սեպտեմբերին 2005թ. սեպտեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 2.5 անգամ: Ընդ որում Երևանում աճել է 60.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 2.6 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 89.6%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի

նկատմամբ՝ 2.4 անգամ, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 5.4 անգամ, էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ 4-ով, հատուկ պահպանվող հողերի նկատմամբ՝ 3-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ փոփոխություն չի գրանցվել:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. սեպտեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	10	9.20	37.2	285.5	158.7	33	33.85	362.2	6772.5	2250.4
Ապարան						18	9.53	90.6	767.6	332.2
Թային						12	5.58	90.6	758.5	318.4
Ծաղկահովիտ								77.0	948.2	153.6
Արարատի մարզ										
Արտաշատ	10	17.36	545.8	1900.0	1205.1	33	18.63	335.1	5418.0	1195.0
Մասիս	5	6.70	85.9	1071.9	695.7	24	11.72	181.1	6772.5	1576.2
Վեդի	12	9.89	142.0	2269.2	537.2	15	8.54	203.8	4515.0	992.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	3.10	62.7	315.0	146.8	14	9.82	294.3	4063.5	788.6
Բաղրամյան	5	62.30	35.4	122.5	87.7	18	74.42	90.6	677.3	490.5
Վաղարշապատ	49	322.98	33.2	807.5	359.4	35	41.18	443.7	9030.0	1320.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								190.2	496.7	325.3
Ճամբարակ	3	5.60	75.0	630.0	261.9	5	3.16	45.3	541.8	140.5
Մարտունի						1	0.09	45.3	1806.0	443.9
Սևան								45.3	451.5	185.5
Վարդենիս						3	5.89	27.2	532.8	204.2
Լոռու մարզ										
Ալավերդի						99	53.05	163.0	2483.3	810.8
Գուգարք								226.4	2709.0	885.2
Սպիտակ						6	3.23	226.4	1490.0	487.5
Ստեփանավան						5	4.72	90.6	2257.5	333.4
Տաշիր						5	6.03	45.3	451.5	197.8
Կոտայքի մարզ										
Արովյան	28	62.38	34.1	696.9	147.6	41	14.35	271.7	11287.5	2920.6
Եղվարդ	39	82.62	61.1	681.4	192.7	47	17.37	172.1	11287.5	2046.5
Հրազդան	28	26.95	105.5	4687.5	398.4	15	9.24	113.2	2709.0	736.8
Շիրակի մարզ										
Ախուրյան						8	6.42	249.0	1693.1	395.7
Ամասիա								36.2	237.0	96.9
Անի						3	3.28	108.7	361.2	202.4
Աշոցք								45.3	112.9	109.2
Արթիկ	1	1.00	175.0	175.0	175.0	1	0.40	63.4	1083.6	156.0
Սյունիքի մարզ										
Գորիս						5	9.60	90.6	673.3	310.4

Կապան								54.3	841.6	214.6
Մեղրի						4	1.24	181.1	1784.2	425.2
Սիսիան						2	2.12	45.3	631.2	184.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	20.65	175.0	341.0	251.2	2	0.54	117.7	2524.8	1214.0
Վայք	4	0.56	112.5	1850.0	586.2			54.3	1430.7	473.3
Տավուշի մարզ										
Բերդ						10	3.57	45.3	841.6	325.5
Իջևան								240.0	1683.2	775.6
Նոյեմբերյան						7	2.75	45.3	3509.5	450.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. սեպտեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավերագույն	Միջին			Նվազագույն	Մտավերագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						40	36651.0	113.2	3612.0	2072.5
Ապարան						2	4740.0	113.2	632.1	170.1
Թալին						2	3369.0	45.3	361.2	77.4
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	33	33680.0	174.0	409.8	220.8	12	21660.0	135.8	2709.0	774.4
Մասիս	7	5770.0	976.4	1000.0	983.0	35	25266.0	135.8	9030.0	990.8
Վեդի						14	14920.0	113.2	993.3	564.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						6	5233.0	135.8	2257.5	924.5
Բաղրամյան								81.5	270.9	110.1
Վաղարշապատ						53	46453.0	135.8	4515.0	1270.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1460.0	135.8	903.0	315.8
Ճամբարակ						3	3138.0	45.3	135.5	82.6
Մարտունի						2	3800.0	90.6	451.5	184.8
Սևան	1	2400.0	621.0	621.0	621.0			90.6	903.0	125.2
Վարդենիս						1	1190.0	45.3	225.8	85.5
Լոռու մարզ										
Ալավերդի								67.9	270.9	96.9
Գուգարք						4	2111.0	67.9	2347.8	508.9
Սյիտակ								63.4	451.5	103.1
Ստեփանավան	1	24.0	262.5	262.5	262.5	4	3960.0	45.3	270.9	88.3
Տաշիր						1	3096.0	45.3	135.5	66.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	57	51750.0	276.0	2337.5	2060.7	88	127789.0	135.8	6772.5	1523.2
Եղվարդ	3	3600.0	835.0	835.0	835.0	58	52307.0	135.8	6772.5	1644.5

Հրազդան	3	3200.0	147.5	199.0	165.1	12	13580.0	135.8	9030.0	1072.8
Շիրակի մարզ										
Ախուրյան	5	2349.0	290.4	2417.6	1011.4	4	2122.3	113.2	1535.1	288.8
Ամասիա								45.3	135.5	66.3
Անի						1	40.0	67.9	180.6	88.6
Աշոցք								40.8	135.5	56.8
Արթիկ	18	10224.0	68.8	433.3	241.9			67.9	925.6	130.3
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1200.0	67.9	541.8	213.5
Կապան	1	1000.0	34.0	34.0	34.0			67.9	632.1	193.6
Մեղրի						1	680.0	67.9	406.4	108.8
Սիսիան						1	940.0	67.9	406.4	125.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	1200.0	682.3	691.2	688.3	4	12230.0	67.9	1128.8	231.5
Վայք								77.0	632.1	110.2
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	82.5
Իջևան	2	2100.0	132.1	132.1	132.1	3	2540.0	67.9	1354.5	338.8
Նոյեմբերյան								45.3	632.1	105.2

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 1 գործարք 0.23 հա մակերեսով՝ Արարատի մարզում:

2006թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 518 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 44.0% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2006թ. սեպտեմբերին 2006թ. օգոստոսի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 27.2%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 48.2%-ով:

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 49 բնակարանների, 31 անհատական բնակելի տների, 242 հասարակական, 32 արտադրական նշանակության օբյեկտների, 160 միավոր /1159.58 հա/ հողերի, 4 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2006թ. սեպտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 12 վարձակալության գործարքների քանակը 2006թ. օգոստոսի համեմատ նվազել է 14.3%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ՝ 61.3%-ով:

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում վարձակալված 1159.58 հա հողերից 2.10 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1157.48 հա հողերի 86.3% կամ 999.35 հա, կազմում են գյուղատնտեսական նշանակության, 5.16 հա՝ բնակավայրերի, 143.97 հա՝ անտառային, 4.70 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 4.00 հա՝ ընդերքօգտագործման, 0.30 հա՝ ջրային հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 321.30 հա, որից 321.18 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 550.26 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. սեպտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	2	300.00	12	21.18
Արարատ	0	0.00	13	181.16
Արմավիր	0	0.00	1	4.00
Գեղարքունիք	0	0.00	19	71.47
Լոռի	3	55.00	25	74.23
Կոտայք	0	0.00	3	1.96
Շիրակ	3	65.00	12	47.73
Սյունիք	2	130.00	9	47.36
Վայոց Ձոր	1	0.26	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00
Ընդամենը	11	550.26	94	449.09

2006թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1080 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.5%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. օգոստոսի համեմատ նվազել է 5.9%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 38.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.4%/, առանձնատների /20.8%/, հասարակական նշանակության օբյեկտների /14.9%/ և հողերի /11.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 573 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. օգոստոսի համեմատ նվազել է 6.7%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ աճել՝ 43.3%-ով:

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 289.84 հա հողեր, որից 2.69 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 94.9% կամ 275.13 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 151.12 հա, որից 151.06 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 9 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2006թ. օգոստոսի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 50.0%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ նվազել՝ 46.4%-ով: 2006թ. սեպտեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 26.7%՝ Երևանում, 33.3%՝ Արարատի, 20.0%՝ Գեղարքունիքի, 13.3%՝ Կոտայքի և 6.7%՝ Շիրակի մարզերում:

2006թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1589 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. օգոստոսի համեմատ նվազել է 1.1%-ով, իսկ 2005թ. սեպտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.9%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.2%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն